

ԽԱՐԿՈՎՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ՀՈՎՍԵՓ ԿԱՐԱՆՆՅԱՆԻ ՆԱՄԱԿ-ՁԵԿՈՒՑԱԳՐԵՐՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ (1921–1922 ԹԹ.)¹

Մեր օրերում, երբ Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական առնչություններով կապված է բազմաթիվ երկրների հետ եւ ձգտում է բարեկամական ու գործընկերային հարաբերություններ կառուցել նրանց հետ, առավել քան այժմեական է միջպետական գործընթացների նախահիմքերի ուսումնասիրությունը: Ասվածի շրջանակներում կարելու է նաեւ խորհրդային տարիների հայ-ուկրաինական դիվանագիտական հարաբերությունների քննությունը:

Կարելու է խորհրդային Ուկրաինայի հետ բարեկամական հարաբերությունների զարգացումը՝ Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) իշխանությունները 1921 թ. գարնանը որոշեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատել եւ փոխշահավետ գործակցություն սկսել Ուկրաինայի հետ՝ ուշադրության կենտրոնում պահելով այնտեղ ապաստանած արեւմտահայ բազմահազար գաղթականների խնդիրները:

ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1921 թ. մայիսի 23-ին Գեորգյան հոգեւոր ճեմարանի շրջանավարտ, ճանաչված հեղափոխական գործիչ, հրապարակախոս Հովսեփ Կարախանյանին (1878–1931) նշանակեց խորհրդային Ուկրաինայի կառավարությանը կից ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ: Նրան տրված մանդատն ստորագրել են ժողկոմ-խորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը եւ արտգործժողկոմ Ասքանազ Մուսվանը²: Հայկական լիազոր ներկայացուցչության կենտրոնատեղին լինելու էր երկրի մայրաքաղաք Խարկովը: Հ. Կարախանյանի նշանակման մասին ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Մուսվանը հեռագրով

¹* Ստացվել է՝ 29.10.2023, գրախոսվել է՝ 1.11.2023:

էլ. հասցե՝ hamosukiasyan@mail.ru:

² Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 8:

տեղեկացրեց ինչպես Խորհրդային Ուկրաինայի արտգործոժողկոմ Քրիստիան Ռակովսկուն, այնպես էլ Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանին: Եւ քանի որ այդ ժամանակ նորանշանակ լիազոր ներկայացուցիչը գտնվում էր Մոսկվայում, Ս. Տեր-Գաբրիելյանին ուղղված հեռագրում մասնավորապես պատվիրվեց, որ նա Հ. Կարախանյանին առաջարկի առանց հապաղելու ճանապարհվել նշանակման վայրը³: Նշենք, որ Մոսկվայի լիազոր ներկայացուցչությունը հետագայում եւս կապող օղակ էր Երեւանի եւ Խարկովի միջեւ: Մոսկվայից դուրս գալով մայիսի 25-ին՝ Հ. Կարախանյանն ամսի 27-ին հասավ Խարկով: Նա շատ արագ ձեւավորեց լիազոր ներկայացուցչության աշխատակազմը եւ անցավ իր պարտականությունների կատարմանը: 1921 թ. հունիսի 30-ով թվագրված մի վավերագրից տեղեկանում ենք, որ լիազոր ներկայացուցչությունն ուներ հինգ աշխատակից՝ ներկայացուցիչ, քարտուղար, հատուկ հանձնարարություններ կատարող պաշտոնյա, մեքենագրուհի եւ աղախին⁴:

Խորհրդային Ուկրաինայում լիազոր ներկայացուցիչ նշանակվելուց հետո Հ. Կարախանյանն իր գործունեության կարեւոր ուղղությունն է դարձնում Ուկրաինայի հայության շահերի պաշտպանությունը, այստեղ ապաստանած արեւմտահայ հազարավոր գաղթականների խնդիրների կարգավորումը: Խարկովի՝ ՀՍԽՀ-ի լիազոր ներկայացուցչությունը մեր ուսումնասիրած արխիվային փաստաթղթերում վերջին անգամ հիշատակվում է 1922 թ. ապրիլին: Հ. Կարախանյանի՝ ՀՍԽՀ արտգործոժողկոմատ ուղարկած 1922 թ. ապրիլի 1-ով թվագրվող մի գրությունից տեղեկանում ենք, որ նա Երեւան էր առաքում Խորհրդային Ուկրաինայի արտգործոժողկոմատի հրատարակած գրքերի խմբաքանակը⁵:

Հովսեփ Կարախանյանը վերադասին պարբերաբար տեղյակ է պահել իր գործունեության մասին: 1921–1922 թթ. հայ-ուկրաինական հարաբերությունների համակողմանի ուսումնասիրման համար առանձնահատուկ կարեւորություն են ներկայացնում Երեւան ուղարկած նրա շուրջ մեկ տասնյակ նամակ-զեկուցագրերը՝ հասցեագրված արտաքին գործերի ժողկոմատին: Դրանք անտիպ են եւ պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

³ Անդ, թ. 4:

⁴ Անդ, թ. 15:

⁵ ՀԱՅ, ֆ. 114, ց. 1, գ. 275, թ. 1–2:

Կարախանյանի նամակները տեղեկություններ են պարունակում Ուկրաինայի հայկական համայնքների վերաբերյալ: Նամակներում խոսվում է ինչպես համայնքի հին բնակիչների, այնպես էլ արեւմտահայ գաղթականների մասին: Հաղորդվող տեղեկությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ Ուկրաինայի հայկական համայնքների կրթամշակութային կյանքի կազմակերպմանը վերաբերող տվյալներ եւ այնտեղ ապաստանած արեւմտահայ գաղթականների դրույթունը ներկայացնող զեկուցումներ:

Հ. Կարախանյանի նամակներից տեղեկանում ենք, որ Ուկրաինայի հայերը ջանքեր են գործադրել համայնքային կառույցներ ստեղծելու ուղղությամբ: Դա առավելապես վերաբերում է Խարկովի բազմամարդ համայնքին: Այսպես՝ 1921 թ. սեպտեմբերի 3/4-ին Ա. Մուսվանին գրած նամակում Հ. Կարախանյանը հաղորդում է, որ քաղաքում գոյություն ունի հայկական ակումբ, ուր շաբաթը մեկ անգամ դասախոսություններ են ընթերցվում: Ուշագրություն է արժանի այն հանգամանքը, որ տեղի հայությունն ամենից շատ հետաքրքրվել է հայաստանյան անցուդարձով: Կարախանյանը տեղեկացնում է, որ ակումբի լեփ-լեցուն դահլիճում ինքը երեք անգամ դասախոսություն է կարդացել Խորհրդային Հայաստանի մասին⁶: Մեկ այլ նամակից պարզվում է, որ յուրաքանչյուր հինգշաբթի եւ կիրակի օրերին ակումբում զեկուցումներ են ընթերցվել նորագույն շրջանի հայ գրականության վերաբերյալ, կազմակերպվել են անգրագետներին տառաճանաչ դարձնելու դասընթացներ, դասավանդվել են հայերեն, ռուսերեն, թվաբանություն եւ աշխարհագրություն: Խարկովում գոյություն ունեին նաեւ հայկական դպրոց եւ դրամատիկական խմբակ: Վերջինը ամիսը երկու-երեք անգամ ներկայացումներ էր բեմադրում⁷:

Խորհրդային Հայաստանի կառավարությունն իր ունեցած սուղ միջոցներից բաժին էր հանում Խորհրդային մյուս հանրապետությունների բուհերում սովորող հայազգի ուսանողներին: Այսպես՝ Խարկովի՝ ՀՍԽՀ-ի լիազոր ներկայացուցչության միջոցով օժանդակություն էին ստանում Խարկովի, Կիեւի եւ Օդեսայի բուհերում սովորող հայ ուսանողները, որոշակի օժանդակություն էին ստանում նաեւ տեղի հայկական կրթամշա-

⁶ Անդ, գ. 215, թ. 25 շրջ.:

⁷ Անդ, թ. 11 շրջ. - 12:

կուլթային կազմակերպությունները: Նոյեմբերի 30-ին Երեւան ուղարկած նամակում Հ. Կարախանյանը բարձրացնում է ուկրաինական բուհերում սովորող հայ ուսանողներին տրվող նպաստներն ավելացնելու հարցը⁸:

Հաշվի առնելով խորհրդային Հայաստանի հանդեպ եղած հետաքրքրությունը՝ ամենեւին պատահական չէ, որ Ուկրաինայի հայությունը պատրաստակամ էր հնարավորության ներածի չափով օժանդակել կթած մեջքն ուղղող հայրենիքին, նպաստել նրա տնտեսության վերականգմանը: Ասվածի ապացույցներից է այն արձագանքը, որ այստեղ եղավ 1921 թ. սեպտեմբերին Երեւանում Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադրման առնչությամբ: 1921 թ. հոկտեմբերի 29-ին Երեւան ուղարկած նամակում Հ. Կարախանյանը հայտնում է, որ կոմիտեի կանոնադրությունն ստանալուց հետո իրենց մոտ եւս դրա մասնաճյուղը կբացեն՝ հայրենիքին նյութապես օգնելու համար⁹: Իսկ նոյեմբերի 30-ով թվագրված մեկ այլ նամակից տեղեկանում ենք, որ խարկովում կազմվել է Հայաստանի սովյալներին օժանդակող կոմիտե, որը խնդիր է դրել դրամի, զգեստների, զանազան մթերքների հանգանակություններ կազմակերպել¹⁰:

Լինելով գրական գործիչ ու հրապարակախոս՝ խարկովում ՀՍԽՀ-ի ներկայացուցիչը կարեւոր էր համարում համայնքային մամուլի միջոց ունենալը: 1921 թ. հունիսի 27-ին արտգործոցը Ա. Մռավյանին հասցեագրած նամակում Հ. Կարախանյանը նշում է, որ պատրաստվում է տեղի համայնքի համար թերթ հրատարակել: Նա հույս ուներ հայկական տառատեսակներ ստանալ Մոսկվայից կամ Պետրոգրադից¹¹: Այս գաղափարը ողջունում է արտգործոցը¹²: Արդեն սեպտեմբերի 3/4-ին Ա. Մռավյանին հղած նամակում Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ գրեթե պատրաստ է «Նոր ճանապարհ» անվանումով թերթի առաջին համարը: Նախատեսվում էր թերթի էջերում նյութեր զետեղել Ուկրաինայի հայկական գաղութի, արեւմտահայ գաղթականների խնդիրների, նրանց եւ ուկրաինական խորհրդային իշխանությունների փոխհարաբերությունների, խորհրդային երկրներում կենսագործվող տնտեսական

⁸ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 13 եւ շրջ.:

⁹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 11:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 13 շրջ. – 14:

¹¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 13:

¹² Անդ, թ. 19:

նոր քաղաքականության մասին: Թերթն ունենալու էր գրական, լուրերի, հայտարարությունների բաժիններ: Կարելու տեղ էր հատկացվելու հայաստանյան նորություններին: Հ. Կարախանյանը հաղորդում է նաև, որ պատրաստվում էին առաջիկա կիրակի օրը, այսինքն՝ սեպտեմբերի 11-ին, լրագրի անդրանիկ համարի բովանդակությունը ներկայացնել խարկովի հայկական ակումբում¹³:

Ինչպես երևում է, Կարախանյանին չի հաջողվել հայկական տառատեսակներ ստանալ Մոսկվայից կամ Պետրոգրադից: Այդ պատճառով էլ 1921 թ. նոյեմբերի 30-ին Ա. Մռավյանին գրած մեկ այլ նամակում նա բարձրացնում է Երեւանից տառատեսակներ ուղարկելու հարցը՝ ընդգծելով, որ Ուկրաինայում հայերեն թերթի կարիք է զգացվում, սակայն տառատեսակներ չունենալու պատճառով չեն կարողանում թերթ հրատարակել: Լիազոր ներկայացուցիչը կարծիք էր հայտնում, թե առավել արդյունավետ կլիներ հայության շրջանում տարվող քարոզչական աշխատանքներն իրականացնել թերթի միջոցով, որովհետեւ «մի կողմից կոմունիստական մտածելակերպ, կոմունիստական աշխարհայացք կպատվաստվեր հայկական աշխատավորությանը, մանավանդ նրա երիտասարդ մասին, եւ մյուս կողմից իրազեկ կպահեր նրանց Հայաստանի իրադարձություններին»¹⁴:

Հայտնի է, թե ինչ ճակատագիր ունեցավ թերթ հրատարակելու՝ խարկովի ներկայացուցչության փորձը, սակայն հայ պարբերական մամուլի ցանկերում նման անվանումով թերթ չկա¹⁵: Այս իրողությունը հիմք է տալիս պնդելու, որ թերթ հրատարակելու՝ Հ. Կարախանյանի փորձը հաջողութամբ չի պսակվել:

Խորհրդային Ուկրաինայում լիազոր ներկայացուցիչ նշանակվելուց հետո Հ. Կարախանյանն իր գործունեության առաջնային խնդիրներից էր համարում այստեղ ապաստանած արեւմտահայ գաղթականության օժանդակություն ցուցաբերելը:

Արտգործոցը Ա. Մռավյանին ուղղված 1921 թ. հունիսի 27-ով թվագրված նամակում Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ իր առ-

¹³ Անդ, թ. 25 շրջ. – 26:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 15:

¹⁵ Մասնավորապես տե՛ս Հալոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչեւ մեր օրերը (1794–1934), կազմող՝ Գ. ԼԵՒՈՆՅԱՆ, Երեւան, 1934, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1967), կազմող՝ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Երեւան, 1970, Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794–1980), կազմող՝ Մ. ԲԱՐԼՈՅԱՆ, Երեւան, 1986:

ջեւ ծառացած կարեւոր հարցերից է հայ գաղթականների խնդիրներով զբաղվելը, քանի որ հենց նրանք էին կազմում խարկովի հայկական համայնքի մեծամասնությունը: Լիազոր ներկայացուցիչը գրում է, որ հայ համայնքին ամենից շատ անհանգստություն է պատճառում բռնի հանրային աշխատանքների հարցը: Նշելով, որ ինքը դեմ չէ, որ Ուկրաինայում ապաստանած հայերը եւս իրենց աշխատանքով օգտակար լինեն հյուրընկալող երկրին, Հ. Կարախանյանը մատնանշում է հետեւյալ հանգամանքը. «Այստեղ ապաստանած տաճկահայերից յուրաքանչյուրը խնամում է իր այս կամ այն ազգականից հետո մնացած որբերին կամ այրիներին, որ նրանց մեջ չկա գրեթե մեկը, որ առնվազն հինգ անձ չկերակրի իր աշխատանքով, ապա պետք է ինձ հետ համաձայնեք, որ մեկ տաճկահայ աշխատանքի ընդունակ տղամարդու երկար ժամանակով բռնի աշխատանքների տանելը հավասարազոր է հինգ հոգու քաղցած գոյության դատապարտելուն, որովհետեւ այստեղ օրաբաժինները շատ չնչին են, եւ աշխատավորի ընտանիքի անդամները ոչինչ չեն ստանում»¹⁶: Այնուհետեւ տեղեկացնում է, որ այդ խնդրի՝ «բռնի աշխատանքների գործը կանոնավորելու» համար դիմել է Ուկրաինայի աշխատանքի կոմիսարին, որը, սակայն, դեռեւս չի պատասխանել, եւ ինքը մտադիր է հարցը բարձրացնել մինչեւ անգամ ուկրաինական կառավարության առջեւ¹⁷: Պատասխան գրության մեջ Ա. Մռավյանը հարցի կարգավորումը թողնում է Հ. Կարախանյանի հայեցողությանը¹⁸: Խնդիրն այն է, որ այս պարտադիր աշխատանքների պատճառով Ուկրաինայում ապաստանած հայերի (եւ ոչ միայն) շրջանում խորհրդային իշխանությունը համակրանքի չէր արժանանում:

Կարախանյանը մեծ ուշադրություն էր դարձնում Ուկրաինայում բնակվող հայության շահերի պաշտպանությանը: Այս առումով նա կարեւոր խնդիր էր համարում երկրի հայաշատ քաղաքներում հայկական ներկայացուցչությունների ստեղծումը: ՀՍԽՀ արտգործփոխարին Ա. Մռավյանին ուղղած 1921 թ. սեպտեմբերի 3/4-ի իր նամակում Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ պատրաստվում է այցելել Կիև եւ Կրասնոդար՝ ծանոթանալու տեղի հայկական համայնքներին հուզող խնդիրներին: Նա գրում է, որ, իր ունեցած տեղեկությունների համաձայն, Կիևի

¹⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 11 շրջ.:

¹⁷ Անդ, թ. 11 շրջ. – 12:

¹⁸ Անդ, թ. 19:

պարսկական հյուպատոսը, որին հանձնված էր քաղաքի հայերի շահերի պաշտպանությունը, թալանում է նրանց՝ կաշառք պահանջելով նույնիսկ ամենասովորական վկայաթղթի համար¹⁹։ Ա. Մուավյանի կարգադրությամբ գրված պատասխան գրության մեջ ժողկոմատի ընդհանուր բաժնի վարիչ Ալեքսանդր Մելյանն առաջարկում է լիազոր ներկայացուցչության իրավասության ներքո վերցնել Ուկրաինայի քաղաքներում բնակվող հայահպատակներին եւ նրանց ազատել Կիևի պարսկական հյուպատոսի կեղեքումներից, ինչպես նաեւ վերահսկել հայկական համայնքների կրթամշակութային հիմնարկները՝ ներգրավելով նաեւ տեղական գործիչներին²⁰։

Հայ-ուկրաինական հարաբերություններում խնդրահարույց էր արեւմտահայ գաղթականների քաղաքացիության հարցը։ 1921 թ. սեպտեմբերի 27-ին Հ. Կարախանյանին ուղարկած գրության մեջ Ա. Մուավյանը նշում է. «Տաճկահայ փախստականները, որոնք ներկայումս ապրում են Հայաստանի սահմաններում եւ Ռուսաստանի եւ Խորհրդային հանրապետությունների զանազան վայրերում, Հայաստանի ԽՍՀ (պետք է լինի՝ ՍՍՀ,– Հ. Ս.) կառավարության կողմից համարվում են որպես Հայաստանի քաղաքացիներ։ Ըստ որում՝ Ուկրաինայում ապրող տաճկահայերի վերաբերմամբ Ձեզ մնում է հետեւել նույն սկզբունքին»²¹։ Խնդիրն այն է, որ հայ գաղթականների հարցն ուկրաինական իշխանությունները դիտարկում էին թուրք-ուկրաինական հարաբերությունների տեսանկյունից։ Նոյեմբերի 30-ին Ա. Մուավյանին ուղղված նամակում Հ. Կարախանյանն այս առթիվ հայտնում է. «Խորհրդային Ուկրաինայի կառավարությունը իմ կրկնակի եւ եռակի դիմումներին՝ ճանաչելու Ուկրաինայում ապրող հայ գաղթականներին իբրեւ հայկական հպատակներ, ինձ միշտ պատասխանում է, որ նրանք տաճկացի եւ հատկապես Անգորայի (Անկարայի, այսինքն՝ Թուրքիայի ազգային մեծ ժողովի,– Հ. Ս.) կառավարության հպատակներ են»²²։ Այնուհետեւ Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ արեւմտահայ գաղթականները դրականորեն են տրամադրված Խորհրդային Հայաստանի հանդեպ եւ «իրենց սրտին մոտիկ են ընդունում Հայաստանի կառավարության եւ

¹⁹ Անդ, թ. 24 շրջ. – 25:

²⁰ Անդ, թ. 41 եւ շրջ.:

²¹ Անդ, թ. 53:

²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 14:

հայ ժողովրդի պետքերն ու կարիքները, սակայն չեն գրվում մասսայորեն հայկական հպատակ՝ երկյուղ կրելով այն հանգամանքից, որ պատերազմի դեպքում խորհրդային Ուկրաինան նրանց կգինվորագրի՝ իբրեւ խորհրդային քույր հանրապետության հպատակների եւ կուղարկի պատերազմի դաշտ»²³։ Բանն այն է, որ 1921 թ. աշնանն ուկրաինական հասարակական-քաղաքական շրջանակներում այն համոզումն էր տիրում, թե 1922 թ. գարնանը պատերազմ է սկսվելու խորհրդային Ռուսաստանի եւ Հեհաստանի միջեւ, ինչը արեւմտահայ գաղթականներին դրդում էր խորհրդային հպատակություն ընդունելու հարցում զգուշանալ։

Հայ-ուկրաինական հարաբերություններում թուրքական գործոնի նշանակությունը Հ. Կարախանյանի համար ի հայտ է եկել նաեւ Ուկրաինայի կոմկուսի կենտկոմի քարտուղար Ֆելիքս Կոնի հետ հանդիպման ժամանակ։ Զրույցի ընթացքում վերջինս շեշտել է Մուստաֆա Քեմալի կառավարության հետ բարեկամական կապեր պահպանելու՝ Ուկրաինայի դիրքորոշման մասին²⁴։ Ահա թե ինչու 1921 թ. սեպտեմբերի 4-ին Երեւան ուղարկած նամակում Հ. Կարախանյանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ուկրաինական կառավարությունը մեծաթիվ կազմով (50 մարդ) դեսպանություն է ուղարկում Անկարա։ Նշվում է նաեւ, որ առաջիկայում խարկով է ժամանելու քեմալական կառավարության ներկայացուցիչը²⁵։

1921 թ. աշնանը, Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միավորման գործընթացի համատեքստում, խորհրդային Հայաստանում քննարկվում էր խորհրդային հանրապետություններում ՀՍԽՀ ներկայացուցչությունների լուծարման հարցը։ Արտգործոպղկոմատն այս մասին տեղեկացրել է նաեւ խարկովում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությանը։ 1921 թ. նոյեմբերի 9-ին Ա. Մուսվյանին գրած նամակում, ի պատասխան վերջինիս այն դիրքորոշմանը, թե Ուկրաինայում ՀՍԽՀ ներկայացուցչության պահպանումն առաջնահերթ չէ, Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ պատրաստ է լիազոր ներկայացուցչության աշխատակիցների քանակը կրճատել մինչեւ երեքը, սակայն դեմ է արտահայտվում ներկայացուցչության փակմանը։ Այս առթիվ նա բերում է հետեւյալ փաստարկները.

²³ Անդ, թ. 14 եւ շրջ.։

²⁴ Վ. ՂԱԶԱՆԵՑՅԱՆ, Հայաստանը 1920–1940 թթ., Երեւան, 2006, էջ 250։

²⁵ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 20 շրջ. - 21։

ներ են: Դրանցում քննարկվող մի շարք հարցեր արդիական են նաև մեր օրերում:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Խորհրդային Հայաստան, Խորհրդային Ուկրաինա, Խարկով, Հովսեփ Կարախանյան, գաղթավայր, գաղթականներ, լիազոր ներկայացուցչություն:

РЕЗЮМЕ

Оценивая важность развития дружественных отношений с Советской Украиной, весной 1921 года власти Социалистической Советской Республики Армения (ССРА) решили установить дипломатические отношения и начать взаимовыгодное сотрудничество с Украиной, сосредоточив внимание на проблемах тысяч западных армянских беженцев, нашедших там приют после геноцида. 23 мая 1921 года Совет Народных Комиссаров Советской Армении назначил Овсепя Караханяна полномочным представителем ССРА на Советской Украине. Армянское представительство располагалось в столице страны Харькове.

О. Караханян периодически информировал правительство о своей деятельности. Он направил в Наркомат иностранных дел в Ереване около десятка писем, имеющих особое значение для изучения армяно-украинских отношений в 1921–1922 годах. Они до сих пор не опубликованы и хранятся в Национальном архиве Армении. В этих письмах раскрывается деятельность представительства, направленная на защиту интересов армян, проживающих на Украине. Согласно этим письмам, большую часть армянской общины Харькова составляли выходцы из Западной Армении, поэтому одним из важных вопросов, стоящих перед Караханяном, было решение проблем тысяч соотечественников. Особенно остро стоял вопрос о гражданстве беженцев: украинские власти обсуждали его с точки зрения турецко-украинских отношений. Вышеупомянутые письма-отчеты являются надежным источником для изучения истории армян Украины. Некоторые из вопросов, обсуждаемых в письмах, актуальны и в настоящее время.

SUMMARY

Assessing the importance of developing friendly relations with Soviet Ukraine, in the spring of 1921, the authorities of the Armenian Soviet Socialist Republic (ASSR) decided to establish diplomatic relations and start mutually beneficial cooperation with Ukraine, focusing on the problems of thousands of Western Armenian refugees who had found shelter there. On May 23, 1921, the Council of People's Commissars of Soviet Armenia appointed Hovsep Karakhanyan as the plenipotentiary of the ASSR in Soviet Ukraine. The Armenian representative office was located in Kharkov, the capital of the country.

H. Karakhanyan periodically informed his superiors about his activities. He sent about a dozen of letters to the People's Commissariat of Foreign Affairs in Yerevan, which are of special importance for the study of Armenian-Ukrainian relations in 1921–1922. They have not been published so far and are kept in the National Archives of Armenia. These letters reveal the activities of the representative office aimed at protecting the interests of Armenians living in Ukraine. According to the letters, the majority of the Armenian community in Kharkov were immigrants from Western Armenia, so one of the important issues facing Karakhanyan was to solve the problems of thousands of Armenian refugees. The issue of their citizenship was particularly acute: the Ukrainian authorities discussed it from the point of view of Turkish-Ukrainian relations.

The above-mentioned letter-reports are a reliable source for studying the history of the Armenians of Ukraine. Some of the issues discussed in the letters are still relevant today.

